

Ուստի եկէ՛ք այս Տարեմուտին միասնաբար աղօթենք առ ամենակարողն Աստուած, եւ խնդրենք, որ Ան մեզի իմաստութիւն շնորհէ, որպէսզի մեր ներկան ապրինք Իրեն հաճելի կեանքով եւ այս ժամանակաւոր կեանքի արահետով ընթանանք դէպի յաւերժութիւն: Եկէ՛ք այս դարաւոր Մայր Տաճարին մէջ մեր պահապան Սուրբ Յակոբ Գլխադիր եւ Սուրբ Յակոբ Տեառնեղբայր առաքեալներու բարեխօսութիւնը խնդրենք, որպէսզի անոնք մեզի առաջնորդեն եւ օրինակ ըլլան իրենց կեանքով, հաւատքով եւ աստուածսիրութեամբ: Եւ վերջապէս, եկէ՛ք աղօթենք որ մեր պահապան Սուրբ Յակոբ Գլխադիրը իր հովանիի ներքոյ պահէ հայ ժողովուրդը եւ Հայ Երուսաղէմը, իսկ Սուրբ Յակոբ Տեառնեղբայր Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը առողջութիւն շնորհէ եւ օգնէ Սուրբ Աթոռոյս գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազանին, որպէսզի իմաստութեամբ առաջնորդէ այս դարաւոր հաստատութիւնը, մնայ կանգուն եւ անսասան, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԱՍԻՆ

Այս Աստուածային գիրքը, որ ես անհունօրէն կը սիրեմ նոյնիսկ այն ժամանակ, երբ կը թուի, թէ անհաւատ եղած եմ, հիմա կ'ուսումնասիրեմ աւելի ուշադիր, քան երբեւէ... Աստուածաշունչի ընթերցանութիւնը երբեք ինծի առիթ չէ տուած կեղծ բարեպաշտութեամբ տոգորուելու, այսինքն՝ այն սխալ հասկացուող երկիւղածութեամբ, որը բնորոշ է վախկոտներուն եւ մոլեռանդներուն: Ես սորվեցայ սիրել Աստուծոյ եւ մարդոց, մշտապէս ամէն բանէ առաւել փափաքիլ արդարութեան եւ արքայութեան, խոյս տալ սուտէն եւ ներել անիրաւներուն:

ՀՈՐՃ ՊԱՅՐԸՆ

Եթէ Մարդը կրնայ Աստուած ըլլալ, եւ թէ Աստուած կրնայ Մարդ ըլլալ, ապա Յիսուս Քրիստոս ե՛ւ Մարդ է, ե՛ւ Աստուած: Քրիստոս մեզի Իրեն նմանելու հնարաւորութիւն տուաւ:

ՀՈՐՃ ՊԱՅՐԸՆ

Մեր Տիեզերքը անսահման մեծ է եւ անսահման փոքր: Անոր անսահմանութիւնը կը տարածուի անցեալի եւ ապագայի մէջ: Մենք երբեք չենք կրնար հասու ըլլալ անսահմանութեանը: Ատիկա բարձր ճշմարտութիւն է, ատիկա Աստուած Ինքն է:

ՏԷՐԷՔ ՓԱՐՏԸՆ

Ապագային մենք կը տեսնենք, թէ ինչպէս անցեալին, այնպէս ալ ներկայիս գիտութիւնը օգտակար է անոնց համար, որոնք կը հաւատան Աստուծոյ:

ՈՌՃԵՐ ՊԷՔԸՆ